

Յոդվածում դիտարկվում է հայերի առանձին խմբերի «վերադարձը» կամ «վերականգնումը» (վերահնտեղումը) դեպի ավանդական ազգային դավանանքներ, որոնց նախնիները ճակատագրի բերումով պատմական հայրենիքում ստիպված էին ընդունել կաթոլիկություն:

## THE ISSUE ON THE RETURN OF DISSENTER ARMENIANS INTO THE TRADITIONAL CHURCH.

Victor Hakobyan

Summary

The article views the return or restoration (reintegration) of the separate groups of Armenians into traditional national beliefs whose ancestors had to accept Catholicism in their historical homeland.

## ՏԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԺԱՌԱՎՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ՔԱՂԱՔԱԾԻՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ

Լյուբա Կիրակոսյան

ԵրՊԴ

Ժամանակակից ճարտարապետությունն իր պատմականությամբ ավելի մեծ հնչեղություն է ստանում համանարդկային մշակույթի մեջ: Այն ներկա հասարակության կեցության գիտակցությունն է և նրա առաջադիմության ցուցանիշը: Հայկական լեռնաշխարհի հնագույն քաղաքաշինական մշակույթը ծևավորվել է պետականության և տարածաշինական մտածողության փոխազայմանավորվածության առկայության պայմաններում: Քաղաքների առաջացումն ու զարգացումն, անշուշտ, կայացած պետականության արգասիք է: Մեր ժամանակների համար կարելի է ավելացնել նաև, որ քաղաքային մշակույթը կերտվում է ներկայիս հասարակության առանձնահատկություններին և թելադրանքին համապատասխան, որոնցով պայմանավորված քաղաքաշինական միջավայր միշտ չէ որ ներդաշնակ է: Ժամանակակից քաղաքաշինական գործընթացներն Հայաստանում ընթանում են համաշխարհային օրինակների արեւտական ընդօրինակման և տեղայնացման մեխանիկական ճանապարհով, որի արդյունքում մենք այսօր ունենք այն խառնաշփոթ պատկերը, որը բնորոշ է երկրի համարյա բոլոր քաղաքներին: Ավելին, այդ միտումներն, ակնհայտորեն, ավելի փոքր մասշտաբներով առկա են նաև Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաք Ստեփանակերտում:

Հայաստանի արդի քաղաքաշինական մշակույթը կազմավորվում է հնի և նորի պայքարի և հակադրության պայմաններում: Ավաղ մեզանում այս ամենը շատ պարզունակ և ուղղակիորեն է հասկացվում և իրագործվում, որն էլ հանգեցնում է քաղաքների համար անվերադարձ կորուստների: Դեռևս աշխարհահռչակ ճարտարապետ Կ. Տանգեն գտնում էր, որ պետք է «ավերել», «հաղթահարել» ավանդույթը ոչ այնպես, որ բացառել այն ժամանակակից ճարտարապետության մեջ, այլ հասնել նրա էռլյանը, ներքափանցել և հասկանալ այն, նրա ծևագոյացման գործընթացներն ու կառուցվածքը և զարգացնել արդեն նորովի՝ ծևի և բովանդակության միասնության մեջ: Մինչև վերջ հասկացված, վերծանված և ստեղծագործաբար վերափոխված ավանդույթը ճարտարապետի ձեռքուն դառնում է ստեղծարար: «Որպեսզի ավանդույթը վերածվի ինչ-որ ստեղծարարի, այն պետք է ենթարկվի բացասաման», - գտնում էր ճարտարապետը:<sup>1</sup>

Որոշակիորեն ողջ ազգային ճարտարապետությունը նույնպես ավանդույթ է, բայց ոչ որպես միանշանակ հասկացվող, ոչ որպես առանձին ծևի կամ մանրամասնի փոխանցում «անցյալից» «ներկային»: Միասնական ազգային ավանդույթը յուրօրինակ ավանդույթների հանրագումար է, որը թափանցելով ազգային մշակույթի բոլոր շերտերը, բարձրանում է ռեպի նրա կառուցման կերպարանշանային, արխիտեկտոնիկ սկիզբ և տարածության փոխազդեցություն: Նորարարությունն այստեղ ոչ միայն ավանդույթը հաղթահարելու մեջ է, այլև ավանդույթի ընտրության, խմբագրման և վերջապես նորի ստեղծման: Ավանդապաշտների և նորարարների, կամ ինչպես համաշխարհային պրակտիկայում է ընդունված ասել՝ գլոբալարական և ռեգիոնալիստների միջև մշակութային վիճաբանությունները միշտ էլ եղել են աշխարհի գրեթե բոլոր երկրներում: Դրանք հատկապես թե՛ էին 20-րդ դարի 20-ական թվականներին: Այժմ մենք նորից կանգնած ենք այդ խնդրի առաջ: Ավանդականի և նորարարականի փիլիսոփայական միասնությունը պետք է դառնա ազգային ճարտարապետության հիմքը:<sup>2</sup>

Ավաղ, մեզանում այս բացարձակ ճշմարտությունը շատ հաճախ արհամարհվում է: Մեզ համար հարազատ դարձած քաղաքային միջավայրը, որն առաջնահերթ ծևավորված էր տարածական կառուցապատման մեջ, օտարանում է, քանզի քաղաքաբնակներիս համար վերանում է նաև քաղաքի կերպար հասկացությունը: Քաղաքային միջա-

<sup>1</sup> Տանգե Կ., Արխիտектура Японии, М., Прогресс, 1976.

<sup>2</sup> Բալյան Կ., Современная национальная архитектура Армении, Ереван, 1987, с 187.

վայրը գործուն մասնակցություն ունի մարդու հոգեկերտվածքի ձևավորման և զգայական ընկալման վրա: Ժամանակի մեջ ամբողջացած այդ հոգվիճակը կտրուկ փոփոխությունների և ձևափոխման պայմաններուն ենթակա է խեղաթուրումների: Արդյունքում, մենք մեր տանը հայտնվում ենք օտարացման մեջ: Չենք հասցնում անգամ ինտեգրվել նորաստեղծ տարածական միջավայրին, քանզի այս ամենը կատարվում է տարերայնորեն, տարածաժամանակային կապի բացակայության պայմաններում: Բայց, չ<sup>o</sup> որ քաղաքը մարդկային կյանքի նյութական միջավայր է, որի կազմակերպմանը պետք է մասնակցություն ունենան ինչպես ներկայի, այնպես էլ անցյալի և ապագայի տարրերը: Ժամանակակից քաղաքներում առկա են նախորդ սերունդների աշխարհայացքի և գեղարվեստական մտածողության արդյունքներ՝ մարմնավորված առաջին հերթին ճարտարապետական հուշարձաններում: Յենց այս հուշարձաններն են, որ քաղաքին տալիս են կերպարային հնչեղություն և նրանց դարձնում առանձնահատուկ: Ավելին, քաղաքներում միաժամանակ ապրում են երեք սերունդների մարդիկ, որոնց գոյության տիրույթն է քաղաքային միջավայրը, որը պետք է ապահովի այդ մարդկանց բնականոն կեցությունն այդ միջավայրում: Յուշարձանների և պատմաճարտարապետական միջավայրի պահպանումը, բնականաբար չի ենթարում քաղաքի զարգացման կասեցում: Քաղաքը կենդանի՝ ապրող, շնչող օրգանիզմ է, որն անխուսափելիորեն պետք է զարգանա և վերափոխվի ժամանակի պահանջներին համապատասխան: Քաղաքները՝ չդարձնելով բանգարաններ բաց երկնքի տակ և պահպանելով պատմական ճարտարապետության շնորհիվ ստեղծած նրա կերպարը, կարելի է առանձնացնել տվյալ քաղաքի եզակիությունը և կարևորությունը համաշխարհային մշակույթի համակարգում: Կարևորագույն հարց է այդ հուշարձանների շուրջը ներդաշնակ տարածական միջավայրի ստեղծումն ու քաղաքաշնական իրավիճակի կարգավորումը: Լավագույն տարբերակն այս դեպքերում հակադրության մեջ ներդաշնակ և «համագործակցող» միասնություն ստեղծելն է: Յամաշխարհային ճարտարապետության մեջ այդպիսի օրինակներից են Մոսկվայի «Նովի Արբատ» փողոցի վրայի բազմահարկ շենքի անմիջապես առջևում գտնվող փոքրիկ եկեղեցին, Լուվրի մուտքը կազմակերպող ապակե բուրգը (նկ.1): Իտալիայի փորձն այս հարցում ավելի քան ընդօրինակելի է: Իտալական քաղաքներն իրենց պատմականության մեջ ապրում են նորօրյա շնչով: Ֆլորենցիայում վերածննդի և գորիկայի ժամանակաշրջանի պատմական շենքերի և ճարտարապետական համույթների կողքին շատ նրբորեն և սահուն կերպով ժամանակակից կառուցապատումն իրականացված է

այնպես, որ պահպանելով հանդերձ պատմաճարտարապետական միջավայրը, հնարավոր է դարձել հասնել նաև ծավալատարածական ամբողջականության (նկ.2): Երևանում, մասնավորապես, նույնպես կան պատմամշակութային արժեքներ, որոնց շուրջը կարելի էր կազմակերպել նորօրյա կառուցապատումը: Այդպիսի կազմակերպման համար դոմինանտի դեր կարող են կատարել ասենք, Շենգավթի, Թեյշեբահնիի և Էրեբունիի ամրոցները, Ավանի վաղքրիստոնեական տաճարը, Կաթողիկե Եկեղեցին, Կոնդի որոշ հատվածներ: Մեր սերնդի համար հարազատ և պատմամշակութային արժեք են նաև խորհրդային շրջանի շատ շինություններ, որոնցից շատերը նույնպես ժամանակակից խառը, շփոթ զարգացումներում վնասվեցին, նույնիսկ վերացան: Խորհրդային շրջանի բարբարոսությունը, որն ուղղված էր նաև նախորդ դարաշրջանների գաղափարական բովանդակությունն ամփոփող ճարտարապետական կառուցների ոչնչացմանը (Պողոս Պետրոս և այլ Եկեղեցիներ),<sup>1</sup> շարունակվեց նաև մեր օրերում: Նույնպիսի գործողություններ իրականացվեցին նաև հետխորհրդային շրջանում: Սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակում, ներդրողների քնահաճույքին և գրպանին ենթակա Երևանում կատարվեցին կառուցապատումներ, որոնց իրականացման ճանապարհին ավերվեցին արժեքավոր շինություններ (Քաղաքային խորհրդարանի շենքը Շահումյան հրապարակում, «Շիրակ» հյուրանոցը, Ղանրապետության, Արամի, Փավստոս Բուզանդի, Տերյան փողոցների 19-20-րդ դարի կառուցները), փոխարեն բարձրացան անճաշակ և գեղարվեստական արժեք չունեցող շինություններ: Լայնածավալ շինարարությունը մեծ վնասներ հասցրեց նաև Երևանի հրապարակներին: Մի շարք հրապարակների շրջակայքում կառուցվեցին և շարունակում են կառուցվել բարձրահարկեր (Ղանրապետության, Ազատության, Շահումյան, Ազնավորի), Էստակադաներ (Բարեկամության), ստորգետնյա ավտոկայանատեղեր (Ազատության), տարածքներում գործում են ճարտարապետական միջավայրին չհամապատասխանող բազմաթիվ սպասարկման օբյեկտներ (Ազատության) (նկ.3): Այս ամենի արդյունքում խաթարվում է հրապարակների տարածքային ամբողջականությունը: Այդ հարցում դերակատարում ուներ նաև արձանների ապամոնտաժումը (Ղանրապետության, Աշխատանքի): Ի դեպ, արձանների ապամոնտաժում կատարվեց նաև հանրապետության համարյա բոլոր քաղաքներում, ինչպես նաև Ստեփանակերտում: Մասնավորապես, նախկին Լենինի անվան ուղղանկյուն հրապարակում ապամոնտաժվեց Լենինի արձանը: Երևանում՝ Ղանրապետության հրապարա-

<sup>1</sup> Գառարյան Մ., Արհմետուրա Երևանի XIX հաշվածական համարյա բուհում, 2008, էջ 200.

կում, կատարվեց վատթարագույնը՝ ապամոնտաժվեց ոչ միայն Լենինի արձանը, այլև պատվանդանը, որի տեղում ժամանակավորապես բարձրացվեց մետաղական գովազդային մի տախտակ, որի ապամոնտաժումից հետո այդ տեղը թափուր է մնացել: Հետագա բոլոր փորձերը այդ տեղը լցնելու՝ ճախողվեցին, քանզի չգտնվեց որևէ մի նախագիծ, որը մասշտաբային և գեղարվեստական առումով համապատասխաներ հանույթին և վերականգներ հրապարակի խաթարված ամբողջականությունը (Ակ.4):<sup>1</sup> Է, որ ստեղծում է քաղաքաշինական և գեղարվեստական նոր որակ: Երևանում այդպիսի փորձեր կատարվել են՝ Զորագյուղ թաղամասը, որը իին Երևանի մի պատառիկն էր, 80-ական թվականներին մտադրություն կար վերականգնելու՝ օրգանապես դարձնելով քաղաքի մի գոլտրիկ պատմական անկյուն: Այն ժամանակ, երբ այստեղ դեռ պահպանված էին բնակելի-տնտեսական կառույցները, հնարավոր էր ունենալ պատմաճարտարապետական միջավայրը վերականգնող մի ամբողջական օրինակ: Սակայն գործը կիսատ մնաց և այսօր այդ տեղում վեր են խոյանում մեկը մյուսի հետ մրցող ռեստորանային համալիրների ծավալները, որոնք իրեց կերպարով անհարիր են պատմական միջավայրին և բոլորովին ուրիշ գործառույթ են իրականացնում:

Համաշխարհային ճարտարապետության մեջ կան օրինակներ, երբ հուշարձանը պահպանվում է նույնիսկ մասամբ՝ ներառնվելով նոր շենքի կառուցվածքի մեջ: Այս փորձը լավագույնս կիրառել են իտալացիները: Երևանում ևս որոշ շենքերի ճակատներ պահպանվել են նոր կառուցապատման մեջ (Ակ. 5): Ընդհանրապես ոչ թե ազգային ճարտարապետության հուշարձանների նմանակումներն են խրախուսվում, այլ ժամանակի ոգուն և ժամանակակից ձևերով լուծված, մասշտաբայնությունը չխախտող նոր շինությունները, որոնք իրենց ներդաշնակ համակեցության մեջ նույնիսկ կընդգծեն պատմական հուշարձանների արժեքը:

Երևանն այսօր անխուսափելիորեն նոտենում է համաշխարհային ստանդարտներին՝ ձեռք բերելով 21-րդ դարի ճարտարապետությանը հատուկ էկլեկտիկություն, մինչդեռ ժամանակին այն սրտաբաց ու վարդագույն քաղաք էր, իսկ իհմա «բազմագույն» անդեմություն:

Բարեբախտաբար, Ստեփանակերտը առայժմ գերծ է մնացել այն արտառոց երևույթներից, որ առկա են Երևանի քաղաքաշինական զարգացումներում: Կառուցապատման ժամանակակից ձեռնարկումները հիմնականում չեն խաթարում քաղաքի նախնական նախագծային մտահղացու-

<sup>1</sup> Ռաշիդյան Ղ., Главная площадь Еревана во времени и в пространстве, Ереван, 2007, с 155.

մը: Ինչպես նախկինում արված բոլոր (1938թ.-ի Սլոբուժյանիկի, 1968թ.-ի Բ.Դադաշյանի) նախագծերում, այնպես էլ ժամանակակից դրսնորում-ներում, պահպանվում է քաղաքի կառուցապատման Ա.Թամանյանի 1926 թ.-ին մշակած համակարգը:<sup>1</sup> 1929-30-ական թթ. կազմակերպված քաղաքի շրջանաձև հրապարակից ճառագայթաձև սկիզբ են առնում գլխավոր փողոցները: Նրապարակից դեպի հյուսիս տարածվում է քաղաքի կենտրոնական կասկադը: Ստեփանակերտում զգալի են փոքր ճարտարապետական ձևերով ու քանդակներով համակառույցները: «Կանաչ այգում», որ ժողովուրդն անվանում է Վերին զբոսայգի, հպարտ կանգնած է արծվը՝ որպես ազատության, իշխանության, անմահության, հեռատեսության և ուժի խորհրդանիշ: «Երեք բանալի» աղբյուր-քանդակը, Փափագյանի անվան դրամատիկական թատրոնի հարևանությամբ, հոգու երեք վիճակներ է ցուցում՝ ուրախություն, մտորում և տիրություն: Ստեփանակերտը այն եզակի քաղաքներից է, որ առանձնանում է իր փողոցների և հրապարակների մաքրությամբ և կանաչապատ դիմագծով (նկ. 6): Այն նաև զարգացող քաղաք է, և քաղաքաշինական ժամանակակից զարգացումների մարտահրավերներին պատվով է դիմակայում: Արդիական շնչով կառուցված նոր շենքերը հիմնականում ներդաշնակված են արդեն գոյություն ունեցող կառուցապատմանը և չեն խաթարում պատմաճարտարապետական միջավայրը (նկ. 7): Հավակնություն չունենալով հանձնարարականներ տալ, այնուամենայնիվ գտնում ենք, որ ճարտարապետական ժառանգության պահպանությունը շատ կարևոր է քաղաքի կերպարային ընկալման տեսակետից: Քաղաքների դիմագիծը պահպանելու համար պետք է կարևոր տեղ հատկացնել նրա կերպարը ձևավորող շենքերին և նրանց շուրջը ներդաշնակորեն կազմակերպել տարածական միջավայրը:


<sup>1</sup> Յրալօվ Յ.Ը., Տամանյան, Մոսկվա, 1950.



Ակ. 1. Փարիզ, Լուվր



Նկ.2. Ֆլորենցիա. Քաղաքի ընդհանուր տեսքը:



Նկ. 3. Օպերան երեկ և այսօր:



Նկ.4. Երևանի Հանրապետության հրապարակը:



Նկ.5. Երևան, Արովյան փողոց, շենքի ճակատ:



Նկ. 6. Ստեփանակերտ. քաղաքի ընդհանուր համայնապատկերը:



Նկ.7. Ազգային ժողովի շենքը:

## СОХРАНЕНИЕ АРХИТЕКТУРНОГО НАСЛЕДСТВА В ПРОЦЕСАХ СОВРЕМЕННОГО ГРАДОСТРОИТЕЛЬСТВА

Люба Киракосян

Резюме

Архитектура-предмет гордости любой страны. Армянское архитектурное наследство значительно. Для армян, архитектура всегда была приоритетной сферой культуры, чья защита долг каждого поколения.

Современные градостроительные процессы в Армении очень часто имели тенденции, которые искажали историко-архитектурную среду. Синтез традиционного и новаторского составляет основу национальной архитектуры. Осуществленная такоу философиеу архитектура даст возможность нашим городам, в частности, Еревану вместо сегодняшней эклектической безликости восстановить свой некогда приветливый и розовый облик. К счастью это не относится к Степанакерту, так как новые здания в основном гармонируют с существующей застройкой и не искажают историко-архитектурную среду.

### THE PROTECTION OF ARCHITECTURAL HERITAGE IN THE CONTEMPORARY TOWN-PLANNING DEVELOPMENTS.

Lyuba Kirakosyan

Summary

Architecture has been the pride of the countries in all times. Especially for us, for Armenians, it is more important direction, because we have a serious architectural heritage, the protection of which is the responsibility of all generations. Modern urban processes in Armenia have such developments that very often historical-architectural environment is spoiled, but it is known that the basis of the national architecture is the philosophical unity of tradition and innovation. Only such an architectural direction, which carries this philosophy will give Armenian cities, especially Yerevan, the opportunity to restore open-hearted and pink feature, which it used to have instead of eclectic neutrality, which dominates nowadays. But this isn't typical for Stepanakert, because in the capital of Kharabakh modern buildings are in harmony with old ones and don't spoil the historical-architectural environment.